

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2021Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԻՆ*




ԹԻՎ 2

**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում
2021թ. հունվար-փետրվարին՝**

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2021թ. փետրվարը 2020թ. փետրվարի նկատմամբ) կազմել է 5.3%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.6%:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՄԸՆԳ) երկու նիշ մակարդակ	2021թ.			
	փետրվարը		հունվար-փետրվարը 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ,%	փետրվարը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2020թ. փետրվարի նկատմամբ, %	2021թ. հունվարի նկատմամբ,%		
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	5.3	0.6	4.9	102.8
01 սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	7.8	0.6	7.1	105.1
02 ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.7	2.4	9.7	103.1
03 հագուստ և կոշիկ	5.2	1.1	3.9	101.7
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.6	-0.4	0.6	99.9
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարաննե րի խնամքի ամենօրյա գործունեություն	6.9	1.3	6.3	103.3
06 առողջապահություն	5.6	1.1	5.6	102.8
07 տրանսպորտ	7.2	0.5	6.4	101.5
08 կապ	0.9	0.4	0.7	100.8
09 հանգիստ և մշակույթ	-0.1	0.2	-0.5	101.7
10 կրթություն	2.1	0.0	2.0	100.0
11 ռեստորաններ և հյուրանոցներ	2.2	0.3	1.9	100.7
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.2	0.7	3.8	101.7

Սպառողական գների փոփոխությունները 2021թ. փետրվարին 2015թ. նկատմամբ **




* Սույն հաղորդագրությունում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2021թ. փետրվարի գնային փոփոխությունների հա-
կիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների և ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում՝ կուտակային (աճողական)) տեղեկատվությունը գե-
տեղվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):

** Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հղման ժամանակաշրջան:


Ենթահինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. փետրվարին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթահինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. փետրվարին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

%

	2021թ.			
	փետրվարը		հունվար-փետրվարը 2020թ.	փետրվարը 2020թ.
	2020թ. փետրվարի նկատմամբ, %	2021թ. հունվարի նկատմամբ, %		
Սպառման ապրանքներ	7.4	0.8	6.9	104.1
<i>այդ թվում՝</i>				
աննդամթերք, խմիչք և ծխախոտ	7.9	0.8	7.3	104.9
ոչ պարենային ապրանքներ	6.7	1.0	6.1	102.7
Ծառայություններ	1.6	0.1	1.5	100.4

Սպառողական գների հավելվածը 2012-2021թթ. փետրվարին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %




Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2021թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական գներն աճել են 0.4-1.2%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Հրազդանում: Մայրաքաղաքում սպառողական գների մակարդակն աճել է 0.5%-ով:

Մենդախթերքի գներ: 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 7.8%, իսկ 2021թ. հունվարի համեմատ 0.6% գնաճ: Վերջինիս մեծապես նպաստել են ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների, յուղերի և ճարպերի, բանջարեղենի 2.4-2.9% գնաճերը:

Բանջարեղենի ապրանքախմբում¹ 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 13.1%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 2.9% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-փետրվարին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 19.7%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 2.5% գնաճ (արևածաղկի բուսական յուղի միջին գնաճը 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ կազմել է 50.4%, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 5.4%):

¹ 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար և փետրվար ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ գրանցվել է 8.7%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 2.4% գնաճ (ալկոհոլային խմիչքի միջին գնաճը 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ կազմել է 8.9%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 2.4%, իսկ ծխախոտային արտադրատեսակներինը՝ համապատասխանաբար 8.2% և 2.3%):

Հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ գրանցվել է 9.0%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 0.6% գնաճ (հացի և այլուրի գնաճը 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ կազմել է համապատասխանաբար 8.4% և 13.3%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 0.5% և 0.6%):

2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 1.5%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 0.4% գնաճ:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 13.1%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 0.3% գնաճ: Չվի գինը 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ աճել է 52.5%-ով, իսկ 2021թ. հունվարի համեմատ գրանցվել է 1.4 % գնանկում:


Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 40.6%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 0.2% գնաճ:

2021թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ձկան և ծովամթերքի՝ 0.6%, ոչ ալկոհոլային խմիչքի 1.0%, սուրճի, թեյի կակաոյի 1.1% գնաճ:

Մրգի ապրանքախմբում՝ 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 8.3% գնաճ, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 3.3% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-փետրվարին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %




Ոչ պարենային ապրանքների գներ: 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 6.7%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 1.0% գնաճ:

2021թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է գորգերի և հատակի ծածկերի, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու՝ 0.3%, կահույքի և կահավորանքի՝ 0.4%, տարբեր տեսակի կոշիկեղենի, կենցաղային և այգեգործական գործիքների, վառելանյութերի և քսանյութերի՝ 0.5%, ոսկերչական զարդերի՝ 0.6%, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի՝ 0.7%, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի՝ 0.9%, խոշոր կենցաղային սարքերի՝ 1.1%, դեղագործական ապրանքների՝ 1.2%, հագուստի՝ 1.5%, մաքրող, լվացող միջոցների՝ 2.0% գնաճ:

2021թ. փետրվարին հունվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 2.3%-ով: 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են 6.6% և 17.1%-ով, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է համապատասխանաբար 5.4% և 6.2% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2018-2021թթ.

2015թ. նկատմամբ



Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է սակագների 1.6%, իսկ 2021թ. հունվարի համեմատ՝ 0.1% հավելած:

Արտարժույթի շուկա: 2021թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.6% և 0.4% հավելած (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2021թ. փետրվարին 2020թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 2.8% և 0.9% հավելած: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.2% և 0.1% հավելած: 2021թ. փետրվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 523.5 դրամ, ինչը 9.4%-ով բարձր է 2020թ. փետրվարի համապատասխան ցուցանիշից (478.7 դրամ):

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2021թ.			
	հունվարը		փետրվարը	
	2020թ. դեկտեմբերի նկատմամբ	2020թ. հունվարի նկատմամբ	2021թ. հունվարի նկատմամբ	2020թ. փետրվարի նկատմամբ
Խնձոր	12.7	30.2	-7.2	23.7
Տանձ	18.6	15.1	-4.6	9.0
Նուռ	15.9	12.9	8.6	15.2
Խաղող	16.6	-16.4	-5.3	-23.2
Արամաթուզ (բանան)	13.1	4.7	-0.9	0.8
Նարինջ	-1.0	32.3	-6.6	27.0
Մանդարին	17.2	15.6	1.4	12.5
Կիտրոն	0.1	5.5	1.7	7.6
Ելակ	12.1	-10.4	4.8	-6.2
Կաղամբ	5.2	-1.2	-3.0	-3.3
Կանաչ սոխ	83.5	37.5	-26.7	19.3
Խառը կանաչեղեն	96.4	53.5	-4.0	42.9
Լոլիկ	21.2	0.1	12.5	8.0
Վարունգ	7.8	-6.7	4.0	7.4
Սմբուկ	47.0	66.8	-0.7	46.9
Պղպեղ	33.6	22.6	1.2	16.0
Գազար	22.3	-2.5	12.6	12.0
Ճակնդեղ	8.1	-28.6	2.0	-26.2
Գլուխ սոխ	8.1	-15.9	10.9	-6.5
Սխտոր	3.4	95.4	-1.9	77.1
Սունկ	8.6	-1.2	10.5	12.9
Կարտոֆիլ	12.2	-17.6	5.8	-15.5

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

	2020թ. դեկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2021թ. հունվարը	
		2020թ. դեկտեմբերի նկատմամբ	2020թ. հունվարի նկատմամբ
Ավստրիա	101.0	99.3	101.0
Բելգիա	100.4	99.1	100.6
Բուլղարիա	100.0	100.1	99.6
Հունգարիա	102.8	100.9	102.9
Գերմանիա	99.3	101.4	101.6
Հունաստան	97.6	98.7	97.6
Դանիա	100.4	100.2	100.4
Իռլանդիա	99.0	100.2	99.9
Իսպանիա	99.4	99.6	100.4
Իտալիա	99.7	99.1	100.7
Կիպրոս	99.2	99.2	99.2
Լատվիա	99.5	100.4	99.5
Լիտվա	99.9	100.5	100.2
Լյուքսեմբուրգ	99.7	100.9	101.1
Մալթա	100.2	98.7	100.2
Նիդերլանդներ	100.9	99.3	101.6
Լեհաստան	103.4	100.9	103.6
Պորտուգալիա	99.7	99.7	100.2
Ռումինիա	101.8	100.9	102.0
Սլովակիա	101.6	100.3	100.7
Սլովենիա	98.8	99.7	99.1
Ֆինլանդիա	100.2	100.4	101.0
Ֆրանսիա	100.0	100.3	100.8
Խորվաթիա	99.7	100.1	100.0
Չեխիայի Հանրապետություն	102.4	101.3	102.2
Շվեդիա	100.6	99.9	101.9
Էստոնիա	99.1	100.5	100.3
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) ²	100.2	100.3	101.2
Հայաստան	103.7	102.2	104.5
Ռուսաստան	104.9	100.7	105.2
Բելառուս	107.4	101.1	107.7
Ուկրաինա	105.0	101.3	106.1
Ղազախստան	107.5	100.6	107.4
Ղրղզստան	109.7	101.0	110.1
Մոլդովա	100.4	100.5	100.2
Վրաստան	102.4	101.1	102.8
Կանադա	100.7	100.6	101.0
Նորվեգիա	101.4	101.1	102.7
Բրազիլիա	104.5	100.3	104.6
Կորեայի Հանրապետություն	100.5	100.8	100.6
Չինաստան	100.2	101.0	99.7
Միացյալ Թագավորություն
ԱՄՆ	101.4	100.4	101.4
Թուրքիա	114.6	101.7	115.0
Շվեյցարիա	99.0	100.0	99.4
Ճապոնիա	98.8	100.5	99.4

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2021թ. հունվարի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

² Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվար-մարտին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2021 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2021թ. ապրիլ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 131):